

ՊՐՈՑ. Հ. ԿՈՒՍԻԿՅԱՆ

ՀԱՅՐԵՆԻՔԻ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ԳԱՂԱՓԱՐԸ
ՀԱՅՈՑ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՄԵԶ

ՀԱՅՊԵՏՀՐԱՏ

Պրոֆ. Հ. ԿՈՒՄԻԿՅԱՆ

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ԳԱՂԱՓԱՐԸ ՀԱՅՈՑ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Գրք
1321



Հ Ա Յ Պ Ե Տ Հ Ր Ա Տ
ԵՐԵՎԱՆ 1942

Հայ ժողովրդի բաղձադարձան պատմությունն իսկապես հայրենիքի պաշտպանութեան համար անընդհատ մղված հերոսական պայքարի մի հսկայական ժամանակաշրջութիւնն է: Սկսած իր դոյացման ժամանակաշրջանից մինչև մեր օրերը՝ հայ ժողովուրդը համարյա անընդհատ կռիւլիս է եղել ամեն տեսակ թշնամիների դեմ՝ իր հայրենի օջախը նրանցից պաշտպանելու կամ նրանց ձեռքից ազատելու համար: Որոչ չըջաններում այդ կռիւլներն առանձնապես բարդանում էին Հայաստանում իշխող դասակարգերի այն տարրերի դավաճանութեան պատճառով, որոնք հօգուտ իրենց շահերի՝ թշնամիներին էին ծախում և՛ հայրենիքի ազատութիւնն ու պատկիւրը, և՛ այն ամենը, ինչ որ մի ժամանակ նրանց համար իբրև թե սրբութիւնն էր: Սակայն պիտի ասեմ, որ իշխող դասակարգերի ներկայացուցիչները բաղձիցս հայ աշխատավոր ժողովրդի հետ միասին կռիւլ են հայրենիքի թշնամիների դեմ և հերոսաբար մահացել կռիւի դաշտում: Սյդպի-

սիներին ժողովուրդը բարձր է գնահատել և իր բա-
նալոր ստեղծագործության մեջ է մտցրել նրանց
կերպարները: Մայր երկրի հետ անքակտելի և
բազմատեսակ կապերով ամենից առաջ կապված
է եղել աշխատավոր մասսան՝ գյուղացիները,
ճորտերը և արհեստավորները: Հայաստանի հո-
ղը հերկող ու մշակող աշխատավորները, շատ
պարզ է, ամենածանր ժամանակաշրջանումն էլ
աշխատել են մնալ իրենց մայր երկրում: Մինչ-
դեռ Հայաստանի իշխող դասակարգերի առանձին
ներկայացուցիչները շատ դեպքերում թողնում
էին իրենց հայրենիքը կամ կարիերային, շահա-
խնդրական նպատակներով, և կամ օտարների
արշավանքների պատճառով: Միջին դարերում
հայ Ֆեոդալներից շատ-շատերը տեղափոխվում
էին Բյուզանդիա կամ Կիլիկիա, առևտրական-
ները թողնում էին հայրենիքը և դադութներ
ստեղծում օտար երկրներում, ինչպես օրինակ
Ղրիմում՝ այսպես կոչված՝ Ծովային Հայաստան
(Armenia maritima): Բազմատեսակ օտար
թշնամիների անընդհատ հարվածները Հա-
յաստանի աշխատավոր տարրերն էին կրում:
Այդ պատճառով շատ հասկանալի է, որ հայրե-
նիքի պաշտպանության դադավարը խորացել էր
հատկապես ժողովրդի գիտակցության մեջ: Բուն
ժողովուրդը՝ գյուղացիությունն էր Հայաստանի
ամեն կողմից պաշտպանում թշնամիների ներ-

խուժումներից : Հայ ժողովրդի բանավոր ստեղծա-
գործութեան մեջ բազմատեսակ ձևերով է արտա-
հայտված այդ դարավոր կռիւլները պատմու-
թյունը : Հայոց հին դրականութեան այն հեղի-
նակները, որոնք աղդվել են ժողովրդական բա-
նահյուսութեանից, իրենց հերթին զանազան
կերպով արտահայտել են ժողովրդից ներշնչված
հայրենասիրական գաղափարներ և հայրենիքը
պաշտպանելու տրամադրութեաններ : Եթե նկա-
տի առնենք, որ հին հայ դրոշմները մեծ մասը
իր ծագումով սերտորեն կապված է եղել
գյուղի հետ, ապա ավելի ևս հասկանալի կլինի,
թե ինչու ժողովրդի հերոսական տրամադրու-
թեանները, նրա հայրենասիրական գաղափարնե-
րը թափանցել են հին հեղինակների երկերի մեջ :

Թե՛ նախարարական և թե՛ ավելի ուշ ժա-
մանակների Ֆեոդալական Հայաստանում իշխող
դասերը շատ և շատ անգամ հայտարարել են
զուտ տեղային, եթե կարելի է ասել՝ «մարդա-
յին» հայրենասիրութեան, և այդ տեսանկյունով
են մոտեցել հայրենիքի պաշտպանութեան գա-
ղափարներին : Օրինակ՝ Արժրուհիների համար
հայրենասիրութեանը կապված էր ամենից շատ
վասպուրականի հետ : Բայց այլ էր աշ-
խատավոր ժողովրդի վերաբերմունքը : Այնտեղ,
որտեղ տարածված էր հայոց լեզուն, այսինքն
ամբողջ Հայաստանում, նա զգում էր իր

Հայրենիքը : Հարստահարվող Հայ դյուղացի-
ներն իրար հետ ավելի սերտ էին կապված ,
քան իշխող Ֆեոդալները, որոնք անընդհատ
կռվում էին իրար դեմ : Մեր հին դրականու-
թյան հուշարձանները ցույց են տալիս , որ այն
դեպքում , երբ դրողները տողորված են լինում
ժողովրդի հայրենասիրական տրամադրություն-
ներով , դրական երկերի մեջ ավելի խոր և ավե-
լի լալն կերպով էին արտահայտվում հայրենու-
սիրության և հայրենիքի պաշտպանության դա-
դափարները : Հիշենք , օրինակի համար , հայոց
հին դրականության վրայլուն ներկայացուցիչնե-
րի՝ Փայստոս Բյուզանդացու , Եղիշեի , Ղազար
Փարպեցու և Մովսես Խորենացու անունները :
Հանրահայտ է , որ այդ հեղինակները երկերը ,
հնուց մինչև մեր օրերը , հայ ընթերցողներին
ամենասիրելի գրքերն են եղել : Այդ բացառը-
վում է ոչ միայն նրանով , որ հիշված հեղինակ-
ների երկերի բովանդակությունն ինքն ըստ ին-
քյան մեծ հետաքրքրություն է ներկայացնում ,
այլ և նրանով , որ նրանց ատեղծագործության
ոգին հայ ժողովրդի ոգին է : Չափազանցության
չի լինի ասել , որ հայ ժողովրդական բանահյուս-
ության մեծ միշտ վառ կերպով արտահայտ-
վող հերոսականությունը հայրենիքի պաշտպա-
նության դործում , անկասկած , ամենաաչքի բնի-
նող դույներով արտահայտված է հիշյալ հեղի-

նախնորի երկերի մեջ: Անգամ այն դեպքերում,
երբ այդ Հեղինակները բնութագրում են իշխող
ուսման երկրի ներկայացուցիչներին, կարելի է նկա-
տել, որ վերջիններիս կերպարները տրված են
ժողովրդական բանահյուսության հերոսների
բնութագրման աղղեցության տակ:

Մեր գրականության չորրորդ դարի հուշար-
ձաններից Փավստոսի «Հայոց պատմություն»-ն
է, որ հայրենասիրության և հայրենիքի պաշտ-
պանության դադափարներն առանձնապես ցայ-
տուն կերպով է արտահայտում: Գլխավոր հե-
տադրությունները ցույց են տալիս, որ Փավս-
տոսի երկը զգալի չափով հիմնված է ժողովր-
դական միասնության վրա: Նկատելի են ան-
շուշտ տաղաչափության տարրերը, այսինքն՝ մի-
տրական ձևը խառնված է պատմաբանի արձակի
հետ: Ուրեմն Փավստոսի երկի դադափարական
առանցքը ժողովրդական է: Հեղինակն ամբողջ
նյութի միջով թեև անց է կացնում և կրոնական
դադափարախոսությունը, որ շատ հասկանալի է
չորրորդ դարի պայմաններում, այնուամենայ-
նիվ կարելի է պարզ նկատել, որ նրա պատմու-
թյան գերիշխող դադափարն է հայրենասիրու-
թյունը և հայրենիքի պաշտպանության խնդիրը:
Մչքի է ընկնում օրինակ, Մերուժան Արժրունու
բացասական բնութագրումը որպես դավաճանի:
Փավստոսն անգամ դորժ է արժանացնում ժողովրդական

վեպի մեջ ընդունալած բնութագրման ձևը՝ չոր-
 բորդ դպրութեան ամեն մի հատվածի վերջում
 ամեյացնելով արհամարհական մի նախադասու-
 թյուն, որի մեջ կրկնվում են միանման արտա-
 հայտութիւններ. «Բայց միայն չարագործն
 Մերութանն միանձի ճողոպրեալ փախչէր, ան-
 կանէր յերկիրն Պարսից», կամ՝ «բայց Մերութա-
 ննն ապրէր փախստեայ», կամ թե՛ «բայց մի-
 այն ապրէր Մերութան Արծրունի փախուցեայ»:
 Մերութանի հակապատկերն է Վասակ զորավա-
 րը, որին Փավստոսը բնութագրում է որպէս
 հայրենասերի, Հայաստանի քաջ պաշտպանի:
 Վասակի բնութագրումը խոհապէս վիպական է:
 Վասակ ապարապետը միշտ հաղթող է, նա է
 հայրենիքի խոհական պաշտպանը: Արշակ թագա-
 վորի հրամանները նա կատարում է յախազույն
 կերպով: Ինքը՝ Փավստոսը հայոց թագավորի,
 որպէս հայաստանը միավորողի՝ կողմնակիցն է,
 և այդ պատճառով առանձնապէս ընդգծում է,
 որ Վասակ զորավարը հայրենիքի պաշտպանու-
 թեան դադարիարի ոչ միայն արտահայտիչն է,
 այլ և կենսագործողը: Վառ գույներով է նկա-
 րագրում Փավստոսը Արշակի և Վասակի ռազմա-
 կան այն պատրաստութիւնները, որ նրանք ա-
 բին՝ գութկանից խմանարով թշնամու առաջխա-
 դացման լուրը: «Ապա իբրև դայս լսէին թագա-
 ւորն հայոց Արշակ և գորավարն նորին Վասակ,

հանդէս աննէին զօրացն իւրեանց: Եւ զտան ի
Ժամանակին անդ ընդ ձեռամբն զօրավարին Վա-
սակայ արք զործոց իբրև վաթսուն հազար, ըն-
տիրք և պատերազմողք, որ միամիտք և միա-
սիրտք էին միարանութեան զործոյն պատերազ-
մին, հասանել մարտնչել ի վերայ որդոց և կա-
նանց իւրեանց մինչև ի մահ»: Զորքորդ զպրու-
թյան յուրաքանչյուր հատվածում փայտոտն
ընդդժում է Վասակ սպարապետի քաջագործու-
թյունները: Ահա սարակ փայտոտը բազմաթիվ
փաստերով ցույց է տալիս, թե Վասակ զորավա-
րը որչափ արիությամբ և եռանդով էր պաշտ-
պանում իր հայրենիքը:

Սոսելով դավաճանության մասին՝ փայտո-
տը, շատ հասկանալի է, նկատի ունի ոչ միայն
հայրենիքին, այլ և կրոնին դավաճանողներին:
Քրիստոնեության դադափարը միջին դարերում
եւրոտրեն կապված էր հայրենիքի դադափարի
հետ: Ահա թե ինչու Մերուժան Արծրունին և
Վահան Մամիկոնյանը, ըստ Փափտոտի, դավա-
ճանության ամենազզվելի ներկայացուցիչներն
են: Եվ այդ պատճառով պատմաբանն իր երկի
չորրորդ զպրությունը եզրափակում է շատ ազ-
դու փաստով. «Ապա որդի մի Վահանայ, անուն
Սամուէլ, եհար սատակեաց զՎահան զհայր իւր
և զՈրմիզդուխտ զմայր իւր՝ զքոյր Շապհոյ Պար-
սից թագաւորին. և ինքն փախստական լինէր

յերկիրն Քաղսեաց» : Հայրենիքը պաշտպանողը պիտի անխնա լինի նաև իր ծնողների վերաբերմամբ, թեև քրիստոնեական կրոնը ծնողներին հպատակվելու պահանջ է դնում : Բայց հայրենասեր Փավստոս Բյուզանդացին Հայաստանի և նրա ժողովրդի պաշտպանության դադարներն ազելի բարձր էր դասում, քան կրոնի սկզբունքները :

Ավելի վառ դույններով է բնութագրել Փավստոսը Վասակ սպարապետի որդի Մուշեղին : Մի Հայոց երկրի հերոսական պաշտպանն է : Մեծն ներսեօը նրան դիմելով՝ ասում է. «Ի ձեռն քո և ի ձեռն աղբի քո փրկեսցէ զերկիրս Հայոց մինչև յաւիտեան» : Քաջաբար կռվելով հայրենիքի թշնամիների դեմ՝ Մուշեղը սակայն աղնվաբար է վարվում իր թշնամու կանանց հետ : Օրինակ, դերի առնելով պարսիկ ավազանիներից 600 հոգի և թագավորի կանանց՝ նա առաջիններին մահապատժի է երթարկում, իսկ կանանց երիվարների վրա նստեցնելով ուղարկում է Պարսկաստան : Փավստոսը «քաջ զորավարի» բնութագրմանը մի առանձին հատված է նվիրում իր Պատմության հինգերորդ մասում, որտեղ ընդդժում է, որ Մուշեղը չէր խնայում իր անձը հայրենիքի պաշտպանության համար :

Հայրենասիրության և հայրենիքի պաշտպանության գաղափարները, որ արտահայտված են

Փայտոս Բյուզանդացու երկի մեջ, իբնեց չարունակությունը դտան V դարի հայ հեղինակների երկերում: Երկու հզոր պետությունների՝ Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև բաժանված և սեղմված Հայաստանն ապրում էր դաժան ժամանակներ: Հայաստանը դարձել էր ժողովրդական անընդհատ ապստամբությունների ասպարեզ՝ ընդդեմ արտաքին թշնամիների: Հայրենիքի պաշտպանության դադափարն իշխում էր ժողովրդական մասսաների դիտակցության մեջ: Ժամանակն ստեղծեց և հերոսներ, որոնք պիտի իրադործեին ժողովրդի բուռն ցանկությունները՝ միաբանվելու և կռվելու հայրենիքի թշնամիների դեմ: Դարձյալ, ինչպես և նախընթաց դարում, հերոսներ առաջ եկան Մամիկոնյան նախարարական տնից, և նրանց ղեկավարությամբ ապստամբ հայ ժողովուրդը կռվեց Պարսից բռնակալության դեմ: Հայ ժողովրդի այս փայլուն պայքարի պատմությունը դրականության մեջ անմահ հացրել են Նղիշեն և Ղազար Փարպեցին: Առանց տատանվելու կարելի է ասել, որ Նղիշեի «Վարդանանց պատմությունը» հայրենիքի պաշտպանության դադափարի ոսկե գիրքն է: Հեղինակի գեղարվեստական հանճարն այդ դրքի մեջ միախառնված է ժողովրդասիրության և ճշմարտասիրության հետ: Եկեղեցականները բավական երկար ժամանակ աշխատել են Նղիշեի երկը կա-

պել միայն եկեղեցու և կրօնի պաշտպանութեան
հարցի հետ: Սակայն այդ երկն ուշադիր կեր-
պով ուսումնասիրողը կնկատի, որ կրօնական
եկեղեցական տարրը Եղիշի գրքում ենթարկվում
է հայրենիքի պաշտպանութեան դադարիարին:
Հայոց եկեղեցին միջնադարյան Հայաստանի
կուլտուրայի բաղադրիչ մասերից մեկն էր: Իսկ
Եղիշի Պատմութեան կենտրոնը, հիմնական մա-
սը կազմում է Հայաստանի և հայ ժողովրդի
պաշտպանութեան, արտաքին թշնամու դեմ մղած
հերոսական կռիւի թեման: Վարդան Մամիկոնյա-
նի կերպարը միշտ սիրելի է եղել ո՛չ այն պատ-
ճառով, որ նա պաշտպանել է հայոց եկեղեցին
ու ջրիստոնեութեան դադարիարը, այլ այն պատ-
ճառով, որ նա ապստամբ հայ ժողովրդի հետ
միասին հերոսաբար կռվել է պարսից բռնակա-
լութեան դեմ: Այդ շատ լայ է հասկացել Եղի-
շին և իր փայլուն երկն ամբողջապէս տողորել է
հայրենասիրութեան և հայրենիքի պաշտպանու-
թեան դադարիարներով: Իր երկի նախաբանի մեջ
գրմելով Դավիթ Մամիկոնյանին՝ Եղիշին ասում
է, որ նրա նպատակն էր առաքինիների քաջու-
թեան և միաժամանակ վատթարների մասին գը-
րել: Իր հայրենասիրական դադարիարները Եղի-
շին արտահայտեց այն ձևով, որը կիրառել էր
հունաց հին դրականութեան մեջ մեծ պատմաբան
Թուկիդիտեսը, այսինքն պատմութեան մեջ գե-

տեղված ճառերի միջոցով: Եթե ուշադրութեամբ
 համեմատենք Վարդանի, Ղևոնդի և ուրիշների
 ճառերը, որոնք իհարկե Եղիշեի հնարած ճառերն
 են, ապա կարող ենք նկատել, որ կրոնական-ե-
 կեղեցական դատողությունների քողի տակ հե-
 դինակն ամենից շատ ընդգծում է հայրենիքի
 պաշտպանութեան դադափարը: Եթե Եղիշեի եր-
 կի մնացյալ մասերում այդ դադափարն աչքի է
 ընկնում պատերազմի, առանձին հերոսների
 գործողությունների և այլ հանգամանքների նը-
 կարագրությունների մեջ, ապա ճառերի մեջ
 տրված է հայրենիքի պաշտպանութեան դադա-
 փարի տեսական հիմնավորումը: Վարդանը և
 նրա զինակիցներն արհամարհեցին մահը՝ հանուն
 հայրենիքի փրկութեան, նրանց հետ տանջվեցին
 նաև Հայաստանի կանայք: Հերոսական մարտիկ-
 ները փրկեցին Հայոց երկիրը: Հերոսական անձ-
 նավերութուն հայրենիքի պաշտպանութեան գոր-
 ծում— ահա V դարի պայծառ հեղինակի աշխա-
 տութեան հիմնական մոտիվը: Մեծ ոգևորու-
 թեամբ և վարպետութեամբ է նկարագրում Եղի-
 շեն Հայաստանի բնակչութեան տրամադրու-
 թյունները հայրենիքը պաշտպանելիս: Թե՛ ա-
 զատները և թե՛ դյուղացիութունն արիաբար
 պատրաստվում էին կռվելու թշնամու դեմ:
 «Ոչ երևէք այնուհետև առաւել տէր քան զճա-
 ոայ և ոչ ապա փափկացեալ քան զգեղջուկ

վշտացեալ, և ոչ ոք քան զոր նուազեալ յարու-
թենէ» — դրում է Նդիշեն: Բոլորն էլ միաբան-
ված էին ընդհանուր դադափարով: «Մի սիրա-
յօթարութեան ամենեցուն արանց և կանանց,
ծերոց և տղայոց», — շարունակում է Նդիշեն:
Մարտնչող հայ ժողովրդի մասին չափազանց
ազդու ձևով է արտահայտվում Նդիշեն, երբ ու-
զում է ընդդեմը, թե ինչպիսի արհամարհան
վերաբերմունք կար դեպի մահը: Նա ասում է.
«Նւ կեանք իւրեանց ի մահ համարեալ էին, և
մահ իւրեանց անշուշտ կեանք»: Նդիշեի փայ-
լուն երկի մեջ արտահայտված դադափարները
հայրենիքի պաշտպանութեան մասին դարեր աս-
րեցին, միշտ մոտ էին հայ ժողովրդի սրտին,
որովհետև ժողովրդական մասսաները միշտ բա-
տիպված էին կռվել արտաքին թշնամիները դեմ:

Ձերմագուշն հայրենասիրութեան ոգով է
պրված V դարի նաև մյուս փայլուն ներկայա-
ցուցչի երկը՝ Ղազար Փարպեցու «Հայոց սլա-
մությունը»: Կարելի է ասել, որ Փարպեցու եր-
կը որոշ մասերում մի տեսակ հրապարակախո-
սություն է: Հեղինակն իր աշխատութեան յու-
րաքանչյուր մասում անընդհատ խոսում է հայ-
րենիքի պաշտպանութեան գոդափարն իրագոր-
ծողների մասին: Եթե հիշենք, որ հայոց եկեղե-
ցին V դարում քաղաքական մեծ նշանակութուն
ունեւ որպես աղղի ինքնուրույնութեան կազմա-

կերպութիւններից մեկը ի հակադրութիւն
 բյուզանդական կայսրութեան եկեղեցու, ապա
 հասկանալի կլինեն այն բաղմամբով հատկաձե-
 ըը, որտեղ Ղազար Փարպեցին գրում է եկեղեցու
 և կրօնի պաշտպանութեան մասին: Ուրեմն եկե-
 ղեցական թեմատիկան պետք է հասկանալ ըստ
 էութեան, և այդ դեպքում Հայաստանի պաշտ-
 պանութեան դադարի արտահայտութիւնը
 Փարպեցու երկի մեջ ավելի ազդու կերևա: Այլ
 կերպ ասած՝ երբ Ղ. Փարպեցին խոսում է եկե-
 ղեցու և կրօնի պաշտպանութեան մասին, դրա-
 նով ուզում է ընդգծել հայ ժողովրդի ինքնու-
 լույնութեան տարրերից մեկը, որ սերտորեն
 կապված է եղել հայրենիքի պաշտպանութեան
 դադարի հետ: Չէ՞ որ եկեղեցին գուտ հայ-
 կական էր, այսինքն անկախ կաղմակերպու-
 թիւն: Ուրեմն չպետք է կարծել, թե Ղ. Փար-
 պեցին եկեղեցու պաշտպանն է հանդիսանում որ-
 ոյես առհասարակ քրիստոնյա կրօնամոլ: Նա՛
 դրեյով պարօնից բռնակայութեան և նրանց կրօնի
 դեմ՝ հակադրում է հայկականը, և ոչ թե առ-
 հասարակ քրիստոնեականը, հայկական կուլտու-
 րայի տարրերից մեկը՝ օտար կուլտուրայի դեմ,
 որը փորձում էր ճնշել հայ ժողովրդին:


Ղազար Փարպեցու երկի մեջ, ինչպես և
 Փավստոսի ու Եղիշի երկերի մեջ, հայրենիքի
 պաշտպանութեան դադարի մարմնացումն են

Մամիկոնյանները: Դա ոչ թե գրական արագի-
ցիա է, այլ իրական փաստ: Նախարարական
կարգերի տիրապետութեան ժամանակ Մամիկոն-
յանները ռազմական հրամանատարներ են եղել:
Ժողովուրդը սովորել էր Մամիկոնյաններին միշտ
տեսնել ռազմի դաշտերում, հայկական զորքերի
գլուխն անցած: Հայաստանի հեծելազորը դեռ
հնադուր ժամանակներից հայտնի էր որպէս
Մերձավոր Արևելքի լավագուշտ հեծելազորներից
մեկը: Այդ հեծելազորի հրամանատարներն էին
Մամիկոնյանները, որոնց ղեկավարութեամբ հայ
հեծյալները ջարդում էին թշնամիներին: Գրա-
կանութեան մեջ ուրեմն Մամիկոնյանների հայ-
րենասիրութեամբ և սիրազործութեանները
պատկերված են որպէս իրականութեան ճիշտ
տպագործութեաններ: Փորձալ հետազոտութեան-
ներ անող բանասերները միշտ ընդգծել են, թե
Ղազարը Մամիկոնյանների տան պատմաբանն է
և այդ է պատճառը, որ նա դովաբանում է Վար-
դանին ու Վահանին: Մինչդեռ փաստերը ցույց
են տալիս, որ այդ հերոսական դեմքերը իսկա-
պէս արժանի էին փառաբանութեան, որովհետև
նրանք ժողովրդի հետ միասին կռվելիս են եղել
Հայաստան ներխուժած թշնամիների դեմ: Եվ
Ժողովրդի իսկական դավաի Ղազարը չէր կարող
չարտահայտել իր սերն ու հարգանքը դեպի
Հայաստանի մեծ զորավարները, որովհետև նրանք

պարսից բունակալության դեմ ապստամբած ժողովրդի գլուխ կանգնեցին և զանազան միջոցներով պաշտպանեցին հայրենի երկիրը:

Փարպեցու երկի մեջ աչքի է ընկնում նույն տեսակի հայրենասիրություն, ինչ և Նդիշեի երկի մեջ, թեև ըստ արտաքինի՝ կարծես թե ամբողջ շարժման գլխավոր տարրը իշխող դասակարգի ներկայացուցիչներն են, բայց և այնպես Պատմության զանազան էջերից կարելի է եզրակացնել, որ ամբողջ հայ ժողովուրդը միաձայն իր հավանությունն էր տալիս Պարսկաստանի դեմ կուլելու գործին: Խոսելով Վահան Մամիկոնյանի պատրաստությունների մասին, պատմելով, որ նա իր հետ առավ նախարարներին և ազատներին, Փարպեցին գրում է միաժամանակ, որ նրա հետ գնացին և «...ամենայն ռամիկն, որք կամաւոր խնդութեամբ երթային ի գործ պատերազմին»: Այս «կամաւոր խնդութեամբ» բառերը պատահական չեն: Հեղինակն ազատորեն այդպես է արտահայտվում, որովհետև հայ ժողովուրդը դիտեր, թե ինչի համար է կռվում, քաջ դիտեր, որ պիտի պաշտպանի իր հայրենիքը:

Հայոց զրականության մեջ առանձին տեղ է բռնում հայ մեծ պատմաբան Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը»: Այս երկը մի տեսակ էնցիկլոպեդիա է հայոց զրականության պատմության, դիտության և գաղափարախոսու-



Թյան: Խորենացու հանճարեղ երկի մեջ արտա-
հայտվել է ամբողջ հայ ժողովրդի մտավոր
կյանքը: Իսկ այդ երկի գլխավոր տարրը, գեր-
իշխող ոգին հայրենասիրությունն է: Խորենացին
ընթերցողին սիրում է իր հայրենիքը և ժողովրդ-
դին: Ժողովրդական ստեղծագործության վիպա-
սանության նյութերը նա սիրով է մտցնում իր
երկի մեջ: Մտցնում է այն, ինչ որ մեծ մասամբ
բնութագրում է իր ազգի հերոսականութունը:
Այդ դեպքերում ամեն մի սողի մեջ նկատելի է
հայրենասեր գիտնականի հրաբորբոք զգացմուն-
քը: Հայաստանը ծագկեցնողները Խորենացու
երկի մեջ պատկերացված են որպես հերոսներ,
իսկ զավաճանները բնութագրված են խորին ս-
տեղծական զգացմունքների արտահայտությամբ:
Խորենացու անձնավորության մեջ միավորված է
գիտնականը և դեղարվեստական դրամատիկյան
ստեղծագործողը: Որպես գիտնական՝ Խորենա-
ցին վերլուծում է, իսկ որպես դեղարվեստական
գրող՝ պատկերում է անցյալը: Ահա նրա սեղմ,
բայց չափազանց ազդու դեղարվեստական նկա-
րագրությունների մեջ առանձնապես արտահայտ-
վում է ջերմ հայրենասիրությունը: Խոսքի վե-
րաբերմամբ Խորենացին շատ ժլատ է, բայց
այն, ինչ նա ասում է, կլասիկորեն նուրբ է և
բովանդակալից: Բավական է հիշել Խորենացու
գրածը պարսից Շասուն թագավորի միջոցա-

ուումների և Մերուժան Արժրունու գործողությունների մասին: Փառասեր Մերուժանն ամենազգլիկի կերպով դարձավ Շապուհի կամակարտարը: Հայաստանի քաղաքական և կուլտուրական ինքնուրույնությունները նա անխնա կերպով կոխտեսց: Դավաճանի և նրա տիրոջ դեմ ապստամբեցին հայ նախարարները և ամբողջ ժողովուրդը՝ Սմբատ Բաղրատունու գլխավորությամբ: Ձիրավի դաշտում տեղի ունեցած ճակատամարտը Սորենացին նկարագրում է մեծ բանաստեղծի վարպետությամբ: «Եւ խմբեցաւ պատերազմն ի դաշտին՝ որ կոչի Ձիրաւ, և մասեան ճակատ առ ճակատ: Եւ մանկունքն քաջ նախարարացն Հայոց ինքնակամ նահատակեալք մտին ի մէջ ճակատեացն առաջնորդութեամբ սպարապետին իւրեանց Սմբատայ սապետի, որդւոյ Բազարատայ, որ յազգէն Բաղրատունեաց»: Հայ երիտասարդները կռւում էին հերոսաբար, կատաղի կերպով հարվածելով թշնամուն: «Ելին և ի զօրացն Պարսից համատիք նոցա, և խաղացին ի մէջ ճակատուցն. և ցիր ընդ ցիր լինէր: Եւ ի դառնայ մանկանցն Պարսից, ընդ հուպ դարձեալ մերոցն զհետ նոցա, օրինակ իմն որպէս փոթորիկ յանտառէ տերեւթառի, աչնպէս երազ երիվարացն առեալ նիզակօք, զի ցուրտ յերկիր ընկենուին ոչ կարելով նոցա յուրեանց ճակատն մտանել»: Հայրենիքի քաջ

պաշտպանները կերպարներն ուժեղացնում են
Խորենացու պաթոսը, վառում նրա հայրենասի-
րական զգացմունքները: «Իսկ ի ծագել արեգա-
կանն ընդդէմ մերոց զօրացն, ի պղնձապատ վա-
հանացն նշոյլք զլերամբքն փայլատակէին իբրև
յամպոյ մեծէ, և ի նոցանէ ի դուրս օտաչէին ի
մերոց նախարարացն քաջ զրահաւորք՝ որպէս
փայլատականց ճառագայթք. յորոց միայն ի տե-
սութենէն դանդիտեալ պարսկական գունդն, սա-
կաւ ինչ և մերն՝ վասն ոչ կարել հայել ընդդէմ
արեգականն ծագման: Իսկ ի բախելն զմիմեանս՝
եղև ի վերայ հովանի ամպոյ, և հողմ սաստիկ
ի մերոցն կուսէ ընդդէմ պարսկականին փչեալ:
Եւ ի խառնակել մարտին՝ պատահէ կամսարա-
կանն Սպանդարատ իմբի մեծի, յորում էր քաջ,
Շերդիր զեկաց արքայ, զգլուխ միջին զնդին
պնդութեամբ զտեղի ճակատուն կալեալ: Եւ
յարձակեալ Սպանդարատ, և հերձեալ զխումբն,
որպէս շանթահար յերկիր կործանէր զքաջն, և
զխումբն ստուտեալ՝ ի փախուստ դարձուցա-
նէր»: Այս և նման բազմաթիւ նկարագրութիւն-
ները Խորենացու երկի մեջ՝ ցույց են տալիս,
թե հայոց հին դրականության մեջ որքան էր
խորացել, արմատացել հայրենիքի պաշտպանու-
թյան գաղափարը: Վիպասանների ոգին զգալի
է նաև Խորենացու երկի մեջ: Հեղինակը թեև
Քաղբատունյաց տան պատմարան է, ժողովրդա-

կան բանավոր գրականութիւնն այնքան է ազդել նրա վրա, որ նա արտահայտել է հայրենիքի պաշտպանութեան գաղափարը ժողովրդի ոգով, ո՛չ մարգային, այլ ընդհանուր հայաստանի չափանիշով: Այդ առանձնապէս աչքի է ընկնում Զիրավի ճակատամարտի նկարագրութեան վերջին պարբերութեան մեջ, որտեղ պատմաբանը պատմում է դավաճան Մերուժանի մահապատիժը: Նկարագրութիւնը կարծես թե էպիքական բնույթ է կրում: Բայց այդ է՛ք դիսավորը, այլ այն, որ հայրենիքի պաշտպանը թշնամուն արժանի հատուցում տվեց: Ժողովրդի պարզ մտածելակերպը իր արտահայտութիւնն է դուել մեծ պատմաբանի երկի այս հատվածում:

Հայոց հին գրականութեան կլասիկներին՝ հայրենասիրութեան և հայրենիքի պաշտպանութեանը վերաբերող գաղափարները արաւիցիայով անցնում էին հաջորդ դարերի հեղինակների երկերի մեջ: Թեև եկեղեցական իդեոլոգիան պահանջում էր գերազանցապէս խոսել քրիստոնեական կրօնի անունից և ի պաշտպանութիւն հայոց եկեղեցու, այնուամենայնիւ մեր հեղինակները երբեմն բացարձակորեն պարզ, իսկ երբեմն քողարկված ձևով ամենից շատ արծարծում են հայրենասիրական գաղափարներ, զանազան ձևերով արտահայտում են հայրենիքի պաշտպանութեան գաղափարը: Լինելով նախարարական այս

կամ այն տան պատմարան, այլինքն ստիպված լինելով զբաղվել որոշ նախարարական տոհմերի արժանիքների փաստարանությամբ՝ մեր դրողները շատ դեպքերում դուցե և իրենց համար աննկատելի կերպով արտահայտում էին ընդհանուր հայկական հայրենասիրություն և ո՛չ թե տեղային՝ Ֆեոդալական: Բայց ընդհանրությունը հայ աշխատավոր ժողովուրդն էր և ուրեմն նրա հայրենասիրական գաղափարներն էին արտահայտում: Մենք այդ կարող ենք նկատել տարբեր տիպի հեղինակների երկերի մեջ, և՛ Ղևոնդ պատմադրի, և՛ Թովմա Արծրունու, և՛ Արիտակես Լաստիվերացու, և սոխյի ու ժամանակների հեղինակների երկերի մեջ:

Դժբախտաբար հայոց հին և միջին դրականության գաղափարախոսության հարցերը համարյա թե չեն ուսումնասիրված, ինչպես և շատ բան դրականության նյութերից դեռևս չի հրատարակված. այդ պատճառով դժվար է ասել, թե ի՞նչ ուղղություն է ստացել հայրենիքի պաշտպանության խնդիրը՝ օրինակ՝ XIII—XVII դարերում: Սակայն հայոց բանավոր դրականության ամենափայլուն հուշարձանը՝ «Սասունցի Դավիթ» էպոսը պատասխան է տալիս դեռ չուսումնասիրված նյութերի փոխարեն: Կաղմվելով X դարում՝ այդ էպոսը պահպանել է հայ ժողովրդի գաղափարները հայրենասիրության և հայրենիքի

պաշտպանութեան մասին: Հին գրականագետները մեծ մասամբ՝ ժողովրդական բանահյուսութեանը թողնում էին գրականութեան պատմութեանից դուրս և դրա հետևանքով շատ դեպքերում չէին նկատում զաղափարախոսութեան այն տարրերը, որոնք ժողովրդից ներթափանցում էին «գրավոր» գրականութեան մեջ: Այժմ ամենքի համար պարզ է, որ օրինակ՝ «Սասունցի Դավիթ» էպոսը ոչ միայն հայոց գրականութեան խոչորագույն երկերից մեկն է, այլ և ամբողջ հայ ժողովրդի զաղափարախոսութեան մի տեսակ էնցիկլոպեդիա է: Եվ ահա, այդ հրաշալի էնցիկլոպեդիայի մեջ շատ պարզ ու որոշ կերպով ձևակերպված է հայրենիքի պաշտպանութեան այն զաղափարը, որի արմատները տանում են դեպի հնագույն Հայաստանը և տարածված են հայոց գրականութեան հին կլասիկներէ երկերում: Մահացու կռիվ բոլոր այն արտաքին թըշնամիների դեմ, որոնք փորձ են անում նվաճելու հայ ժողովրդի հայրենիքը, — ահա՛ այն հիմնական զաղափարը, որ սերտորեն կապված է Սասունցի Դավիթի հերոսական պայքարի հետ: Դավիթը կռվում է ոչ թե անձնական փառքի համար, այլ իր ժողովուրդը արարական հրոսակներէց ազատելու նպատակով: Գլուղացի Դավիթը պարզ հասկանում է, թե ինչ պիտի բերի Մսրա Մելիքի իշխանութեանը, նրա հարկահան-

ների լրօծը, և նա կուվում է ներթափանցող հարքս-
տահարիչների դեմ: Նրա կռիվն անխնա է: Նրա
հակառակորդ Մարա-Մելիքը թեև դիմում է
խարդախ միջոցների, բայց Դավիթը կուվում է
ազնվորեն, ասպետաբար: «Զժողովուրդ, կնիկ,
աղջիկ, քաղքեն տարած այսան-թալան հետ դար-
ձուց, բերեց հասավ Սասնա քաղաք, կանչեց ժո-
ղովուրդ, ասաց.— Սմեն մարդ դա, իրեն ասլ-
րանք ճանչնա, վերցո՛ւ»: Ժողովրդի շահերի
համար կուվեց Դավիթը: Հիշելով, որ «Ստոռնցի
Դավիթ» էպոսը կազմվել է X դարում, այսինքն
միջնադարյան Հայաստանի բարդ պատմական
պայմաններում, և համեմատելով այդ էպոսի
մեջ արտահայտված հայրենիքի պաշտպանու-
թյան դադափարը մեր IV—V դարերի գրողների
նույն դադափարների հետ, կարելի է ասել, որ
ժողովրդական էպոսն ավելի պարզ, բո-
վանդակալից, բազմակողմանի և վառ կեր-
պով է արտահայտել հայրենասիրության և
հայրենիքի պաշտպանության դադափարները:
Հին Հայաստանի գրողների երկերում շատ
հասկանալի պատճառներով իշխող դասակար-
գին էր պատկանում հայրենիքի պաշտպանու-
թյան դադափարի արծարծումը և իրագոր-
ծումը: Ժողովուրդը կարծես թե երկրորդ պլանի
վրա էր: Թեպետ և միաժամանակ հարկ է ընդ-
դժել, որ հայրենասիրության և հայրենիքի

պաշտպանութեան դաղափարները մեր հին կա-
 սիկներէ երկերում մեծ մասամբ հայ ժողովրդա-
 կան էպոսի դրոշմն են կրում: Այնուամենայնի-
 հայ ժողովուրդը հնուց մինչև մեր օրերը ամե-
 նից վառ կերպով և միևնույն ժամանակ շատ
 պարզ արտահայտեց իր հայրենասիրական իդեո-
 լոգիան «Սասնա ծռեր»-ի մեջ: Կովել հանուն
 ժողովրդի ազատութեան, պայքարել հօգուտ
 հայրենիքի—ահա՛ նրա պարզ նշանաբանը: Փեռ-
 դալիգմի դարաշրջանում հայրենիքի պաշտպանու-
 թեան դաղափարը համարյա անփոփոխ մնաց
 մինչև XIX դարը: «Սասունցի Դավիթ»-ը բանա-
 վոր և եղիշեն գրավոր գրականութեան մեջ
 հայ ժողովրդի՝ օտար թշնամիներէ դեմ մղած
 անընդհատ պայքարների ժամանակ դաղափարա-
 կան աղբյուրների դերն էին կատարում: }



Բայց ինքն ըստ ինքեան հայրենիքի դաղա-
 փարը ժամանակի առաջխաղացմամբ հայ ժողո-
 վրդի համար շատ բարդ հասկացողութեուն էր
 դառնում շնորհիվ այն հանգամանքի, որ Հայաս-
 տանը, մանավանդ XII դարից հետո, անընդհատ
 բաժանվում էր զանազան մասերի և ենթարկվում
 հարևան պետութեաններին: Կապիտալիստական
 սոցիալիզմի հաղթանակի նախօրյակին այդ
 հանգամանքն առանձնապես բարդացրել էր, քա-
 նի որ Հայաստանը բաժանված էր երեք պետու-

Թյունների միջև՝ Ռուսաստանի, Տաճկաստանի
և Պարսկաստանի: Ո՞րտեղ էր Հայրենիքը և ո՞ր
Հայրենիքի պաշտպանության մասին կարող էր
հարց լինել: Հայոց նոր գրականության մեջ այդ
հարցերի պատասխանները տրվեցին զանազան
կերպ:

Հայաստանը թեև XIX դարում բաժանված
էր երեք մասերի, բայց Հայ Ժողովրդի, աշխա-
տավոր գյուղացիության համար դոյություն ու-
ներ միասնական Հայաստանի դադարվարը: Աշ-
խատավոր ժողովուրդը դարեր շարունակ իր
Հայրենիքի մի ծայրից մյուսն էր անցնում զա-
նազան քաղաքական և ռազմական պատճառնե-
րով: Սակայն ժողովրդի կապերը մայր երկրի
հետ միշտ ամուր էին, միշտ հաստատուն: Հայ
գյուղացու համար հայրենական էր այն հողը,
որ նա մշակել էր յասնյակ դարերի ընթացքում,
որտեղ նա ստեղծագործել էր աշխատանքի բոլոր
բնագավառներում, սկսած սև աշխատանքից և
մինչև մտավոր նուրբ աշխատանքը: Գյուղացու
այդ ջերմ սերը դեպի իր Հայրենիքը, նրա անց-
յալը և ներկան բազմակողմանիորեն արտահայ-
տեց Խ. Սբովյանը «Վերք Հայաստանի» վեպի
մեջ: Մեր մեծ գրողը կարողացավ ջերմ զգաց-
մունքներով և բազմազան ձևերով պատկերել Հայ
Ժողովրդի Հայրենասիրությունը, ստեղծեց մի
աննման երկ, որը մեր հին և միջնադարյան դրա-

կանուխյունը անխախտ կերպով կապում է նորի հետ: Աբովյանի այդ պոեմի բազմաթիվ էջերում շատ որոշակի արտահայտված է հայրենիքի պաշտպանութան գաղափարը: Մեծ հայրենասիրն իր մտքերն արտահայտում է զարմանալի պարզ և ազդու.

«Վա՛յ էն՛ ազգին, որ աշխարքումս անտեր ա,
Վա՛յ էն՛ երկրին, որ թշնամու գերի ա,
Վա՛յ էն՛ խալխին, որ ինքն իր կյանքն, աշխարքը

Ձի պահպանիլ, ու հարամու ձեռ կտա»:

Բայց հայ ժողովուրդն իր կյանքն ու աշխարհը պահպանողներ ունեցել է և ունի: Աբովյանը գրում է և՛ հեռավոր անցյալի, և՛ ներկայի հայ հայրենիքի պաշտպաններին մասին: Վեպի հերոս Աղասին հայրենիքի ամենամիայրուն պաշտպանն է: Դա նույն Սասունցի Դավիթն է, ով իրեն ամբողջապես նվիրում է հայրենիքի պաշտպանութան գործին: Բայց Աղասին մենակ չէ: Ժողովրդի մեջ կան շատ քաջ պաշտպաններ, որոնք պատրաստ են իրենց կյանքը զոհել հայրենիքի համար: «Թող մեր թշնամին մեր առաջը գա, սիրտ ունի մոտենա, սովորել ա գողի պես գեղեր քանդի, տավար հետ ածի, թե կտրիճ ա, թող իր հունարը ցույց տա: Մենք հազար մարդ չենք ըլի՛ ձեր ղոնչունը քսան հազարից էլ սովելի ա. քանի շունչ ունինք մեր հոյն ու օղյու-

չաղը ձեզ չե՛նք տալ, յեղ դառ»։ Հայրենիքի պաշտպանության համար կռվել, արխարար, ու շաղրուկյուն չդարձնելով սպառնացող թշնամու գերազանց ուժին, ահա՛ այն տրամադրությունը, որով տողորված է հայ ժողովուրդը իր թշնամու դեմ կռվելիս։ Արուսյանի հերոսները հետևում են Հայաստանի անցյալի հերոսներին։ Նրանց աչքի առաջ է վարդան Մամիկոնյանը։ Նրանք շատ լավ գիտեն, որ անցյալում ամեն ինչ Հայաստանում ստեղծված է ժողովրդի ձեռքով։ Հայ աշխատավորների ձեռքերը կերտել են փառավոր մայրաքաղաք Մինին, նրա զարմանալի և հրաշապեղ շինությունները։ Այդ բոլորը վսեմ հայրենասիրական զգացմունքներ է առաջացնում նրանց մեջ և ավելի ևս բորբոքում է հայրենիքի պաշտպանության տենչը։ Եվ, թեպետ հեղինակն իր վեպն անվանել է «Ողբ հայրենասերի», այնուամենայնիվ և՛ հայ ժողովրդի, և՛ գրականության մեջ նրա երկը միշտ հասկացվել է որպես մի հրակեզ կոչ հայ հայրենիքը վերստեղծելու և պաշտպանելու։ Պատահական բան չէ, որ մեր նոր գրականության բոլոր այն հեղինակները, որոնք գրադվել են պատմական վիպագրությամբ կամ հայրենիքի պաշտպանության թեմատիկայով, իրենց ստեղծագործության ելակետն են ընդունել Մարշաուր Արուսյանի աննման երկը։

Արուսյանի անմիջական հետևորդներին էր

Ռ. Պատկանյանը, որի բանաստեղծությունները մեջ շատ տողեր նվիրված են հայրենիքի պաշտպանության թեմային: Հայրենիքի պաշտպանության գաղափարին նա Աբովյանի նման մոտենում է կրակոտ սրտով, որպես պայքարող բանաստեղծ: Իր մի երգիծաբանական բանաստեղծության մեջ, որ կոչվում է «Հայ և հայություն», նա հարց է տալիս.

«Դու պատրամ^ոս ես թողնել կայքը,
ծընողք, եղբարք, սիրական.
Սիրելիվույդ տեղ կրծքիդ սեղմել միշտ
մահառիթ հըրացան.
Դու պատրամ^ոս ես անվախ երթալ թըչնամբի
սուրի դեմ,
Սարսափելի մահդ տեսնել դու կարո՞ղ ես
ծաղրադեմ»:

Այս հարցերն ավելի շատ վերաբերում են հայ բուրժուաներին և քաղքենիներին: Բայց պատասխանը տալիս է հայ դյուղացին, հայ աշխատավորը: Մենք գտնում ենք այդ պատասխանը «Վանեցի գեղջուկի տաղը» բանաստեղծության մեջ.

«Արի փըչըեմ ես քու խոփը, տանք դարբինին
կրոնլու,
Կրոնք-կոփենք սուր ու սուսեր՝ դուչմանի
դեմ կըռվելու:

Եղբարք հայեր, առեք խոփը, տըվե՛ք
դարբինին կրօնը,

Կըռել—կոփել սուր ու սուսեր՝ Հայաստանը
փըրկելու»:

Ժողովուրդը պատրաստ է զոհելու ամեն
ինչ, իր դույքը և կյանքը, և կոփելու հայրենի-
քի համար: Վանեցի «գեղջուկը» պատրաստ է
«անլախ երթալ թչնամիի սուրի դեմ», պատ-
րաստ է իր խոփը զենք դարձնել և «սարսափելի
մահ տեսնել»: Այդպես ուրեմն հայրենիքի
պաշտպանության դադափարը, որ լիովին ժողո-
վըրդական բնույթ է կրում Արուսյանի երկի մեջ,
իր շարունակությունը գտնում է Գամառ Քաթի-
պայի ստեղծագործության մեջ: Բայց եթե Ա-
բովյանը խոսում է կոնկրետ պատմական դեպքե-
րի կապակցությամբ, Հայաստանի սրոչ տերի-
տորիայի պաշտպանության մասին, Գամառ-
Քաթիպայի խոսքերն ուղղված են Հայաստանին
վերացականորեն: Իհարկե պոետը կոչ է անում
պաշտպանելու հայ հայրենիքը, բայց իրոք քա-
ղաքականորեն Հայաստանը դեռ պետք էր դըր-
վել: Մեր բանաստեղծներն ու վիպասանները
XIX դարում ստիպված էին հայրենիքի ազա-
տագրման և պաշտպանության դադափարները
միացնել: Այդ մենք նկատում ենք և Մ. Նալ-
բանդյանի բանաստեղծությունների մեջ: Գրա-
կանության մեջ առաջին տեղն է բռնում «ազգի»

նաղալարը, որովհետև նա դոյությունն ունի
որպես միասնականություն, մինչդեռ այդ «ազ-
դի» տերիտորիան բաժանված էր մասերի, զուրկ
էր միասնականությունից: Հայ հեղինակներն
ստիպված էին ուղղել իրենց հայացքները դեպի
պատմական Հին Հայաստանը: Այդ կողմից շաս-
րնորոշ է Ղ. Ալիշանի «Նվազք» ժողովածուի 3-րդ
հատորը, որի վերնագիրն է «Հայրուհի»: Նրա
այդ բանաստեղծությունների մեծ մասը կազ-
մում է հայոց պատմության հերոսական էջերի
մի տեսակ ժամանակագրություն: Ալիշանի բա-
նաստեղծությունների հերոսների մեջ կենտրո-
նական տեղ են բռնում Մամիկոնյանները որպես
հայրենիքի պաշտպաններ: Վահան Մամիկոնյա-
նին է վերաբերում այն կրակոտ բանաստեղծու-
թյունը, որի մեջ պոետը կոչ է անում.

«Հայրենավրէժքդ հայկազունք

Հապօ՛ն, ի դէն դունդազունդ,

Յեռեալ ի պար թունդ ի թունդ՝

Ի դէն ի վրէժ, օ՛ն անդը յառաջ,

Ի դէն ի վրէժ, մի՛ ձախ մի՛ յաջ...»

Պոետն աշխատում է բոլորքել վրեժի
դրացմունքները իր հայրենակիցների մեջ, ո-
րովհետև հայ հայրենիքը օտար կեղեքիչների
ձեռքումն էր: Զենքով և միայն զենքով պիտի
կռվել հայրենիքը ներխուժողների դեմ: Այդ է
քարոզում բանաստեղծը:

Սկսած Աբովյանից՝ Հայրենիքի փրկութեան
և պաշտպանութեան դադարն անընդհատ
կրկնվում է վաթսուևական թվականների և ա-
վելի ուշ ժամանակների հայ պոեզիայի մեջ: Մ.
Նալբանդյանն ուղղակի ասում է.

«Գնա փրկել մեր Հայրենիք,

Պատերազմի վառ հանդես»:

Մեծ ուժով ցիտենք իր այդ կոչը հիմնավո-
րում է շատ պարզ և ազդու խոսքերով.

«Ամենայն տեղ մահը մի է,

Մարդ մի՛ անդամ պիտ մեռնե:

Բայց երանի, որ յուր ազգի

Ազատութեան կը դոհվի...»

Ճիշտ է, որ այս խոսքերը վերաբերում էին
հայ ժողովրդի ազատագրմանը և ո՛չ թե ունեցած
պետութեան պաշտպանութեանը, որովհետև այդ-
պիսին դեռ չկար: Սակայն էութեանը մնում է
նույնը. հայրենիքը պաշտպանել ըստ շատ պարզ
սկզբունքի՝ մահ կամ ազատութեան:

«Ո՛չ թե չենք ուզում հողե ցհող կորչել,
Թշնամու արյունով մեր թրին ջուր տանք»
ասում է պոետը դարձյալ Վարդան Մամիկոնյա-
նի անվան հետ կապված բանաստեղծութեան
մեջ:

Հայրենիք ստեղծելու, այսինքն Հայաստանն
ազատելու և հայ ժողովրդին միավորելու և այդ
նոր հայրենիքը պաշտպանելու դադարները

չարունակում են դարդանալ 70—80 թվականնե-
րին: Եթե մեր 40—60 թ.թ. դրոշները ցարիզմի
դժվար պայմաններում ստիպված էին հայրենիքի
պաշտպանության դադափարը կապել մի կողմից
ցարիզմի քաղաքականությանը չհակասող փաս-
տերի հետ (ինչպես օրինակ՝ Արովյանը, որ զը-
րում էր հայրենիքի պաշտպանության մասին
ուռս-պարսկական պատերազմի էպիզոդներին կա-
պակցությամբ), ապա մյուս կողմից նրանք ա-
վելի ևս ստիպված էին (օրինակ՝ Մ. Նալբանդ-
յանը և Ռ. Պատկանյանը) քաղաքական նկատա-
ռումներով խոսել հայրենիքի պաշտպանության
մասին «առհասարակ» վերացականորեն: Ճիշտ
է, որ քանի մեր դրականության մեջ անընդհատ
արծարծվում էր հայ ժողովրդի հայրենիքն ազա-
տագրելու և նրա անկախությունը վերականգնե-
լու դադափարը, այլ միջոց համարյա չկար խո-
սելու հայրենիքի պաշտպանության մասին: Մը-
նում էր դառնալ շին Հայաստանի պատմությա-
նը և այդ նյութը օգտագործելով՝ գրել հայրե-
նիքի պաշտպանության մասին: Բաֆֆին և Ծե-
րենցը դիմում են այդ միջոցին և ստեղծում են
պատմական վեպեր, որոնց մեջ չափազանց պարզ
ու որոշ աչքի է ընկնում հայրենիքի պաշտպա-
նության դադափարը:

Հայրենիքի պաշտպանության դադափարը
Բաֆֆին գեղարվեստորեն նուրբ կերպով արտա-
հայրենիքի պաշտպ.—3

Հայտեց իր «Դավիթ-բեկ» վեպի մեջ: Սակայն: «Սամվել»-ի մեջ նա կարողացավ այդ նույն դա-
 դափարն ավելի լատև հմտությամբ պատկերաց-
 նել, ներշնչելով ընթերցողին այն մտքերը և
 տրամադրությունները, որոնք հնագույն ժամա-
 նակներից ապրում են հայ ժողովրդի սրտում:
 Այն հանդամանքը, որ Բաֆֆու այս վեպի մեջ
 շատ զգալի է Փավստոս Բյուզանդացու «Հայոց
 պատմության» ողին, առանձնապես մեծ նշանա-
 կություն ունի: Քանի որ Փավստոսի երկը հիմ-
 նրված է ժողովրդական ստեղծագործության
 նյութերի վրա, ուրեմն Բաֆֆու վեպի գաղա-
 փարական գլխավոր տարրերից մեկը նույնպես
 սերտ կերպով կապված է հայ ժողովրդի ինքնա-
 պաշտպանության գաղափարի հետ: Գլխավոր
 հերոս Սամվելը, ինչպես և նրա զինակիցները,
 տողորված է իր հայրենիքի պաշտպանության
 գաղափարով: Նրա և իր զինակիցների հայրենա-
 սիրությունը, հայրենիքը պաշտպանելու տենչը
 արտահայտում են ամբողջ հայ ժողովրդի տրա-
 մադրությունը: Վեպի մեջ, ըստ արտաքինի,
 կարծես թե շատ քիչ տեղ են բռնում այս միտքը
 հաստատող փաստերը: Սակայն, եթե չմոտե-
 նանք միմիայն այդ հանդամանքի տեսակետով,
 այլ ի նկատի ունենանք ամբողջ վեպի բնութիւնը
 և հայոց գրականության մեջ Բաֆֆուց առաջ
 արտահայտված մտքերը հայրենիքի պաշտպա-

նության վերաբերյալ՝ որոշակի կարող ենք ասել, որ Սամվելը պատկանում է Աղստու, Սասունացի Դավթի և ուրիշ նման հերոսների տիպին: Սամվելի խոսքերը պարզ ապացուցում են այդ. «Թշնամին վճիռ է դրել՝ չինայել ոչ ոքի, ով որ կրնդ լիմանա: Իսկ մենք պիտի վճիռ դրենք՝ չինայել ոչ ոքի, ով որ խույս կտա: Եթե մեր նախարարներից ոմանք այնքան վատ կլինեն, որ ընդհանուր վտանգի ժամանակ միայն իրենց անձը և ընտանիքը պահպանելու համար կփախչեն դեպի օտար երկիր, այդ դեպքում մենք առաջինը կլինենք, որ նրանց կմորթենք իրենց ամբողջների սյամի վրա...» — ասում է Սամվելը Մեսրոպին: Այս «պլեբեյական» սպառնալիքը կարող էր ասվել միայն ժողովրդի անունից, այդ ձևով կարող էր արտահայտել միայն ժողովրդի որդին: Սամվելի խոհակից Սահակ Պարթևն ավելի վերացականորեն է արտահայտում հայրենիքի պաշտպանության դադափարը: Նա ասում է. «Կրոնի, ազգի, հայրենիքի փրկությունը և նրանց պաշտպանության համար ամեն դժարերություն հանձն առնելը՝ կլինի մեր կռիվների նշանաբանը: Ես մեծ հույսեր ունեմ, որ եթե չհաղթենք, գոնե պատվով կմեռնենք...»: Մի կողմ դնելով այն խնդիրները, որոնք կապված են Բաֆթու ժամանակի հայոց հարցի դրույթի հետ և որոնք այսպես թե այնպես

չոչանիված են «Սամվել» վեպի մեջ, հարկավոր է ընդգծել այն, որ հայրենիքի պաշտպանության դադափարն այստեղ ծավալված է լայն կերպով և համապատասխան ժողովրդական այն տրագիցիաների, որոնց արմատները տարածված են հայ ժողովրդի էպոսի և հին գրականության մեջ:

Հայրենիքի պաշտպանության դադափարը Բաֆֆուն համահավասար իր արտահայտությունն է դուել Մուրացանի «Գևորգ Մարզպետունի» վեպի մեջ: Մուրացանը շարունակեց մեր հին գրականության, Մերենցի և Բաֆֆու դիժը: Հայրենասիրության և հայրենիքի պաշտպանության վսեմ դադափարները նա պատկերացրեց վարպետորեն: Այս վեպի մեջ թե՛ ինքը դիխավոր հերոսը՝ Մարզպետունին և թե՛ նրա ղեկավարները պլաստիկ կերպով են բնութագրված որպես հայրենիքի պաշտպաններ: Հայաստանի քաջերը անվեհերաբար կռվում են ներխուժած արաբների դեմ: Կռիվ թե՛ արտաքին և թե՛ ներքին թշնամիների դեմ, — ահա հայրենի երկիրը պահպանելու միակ միջոցը: Մուրացանն իհարկե շոչափում էր նաև հայ ժողովրդի ազատագրման հարցը XX դարում: Սակայն անկախ գրանից՝ հայրենիքի պաշտպանության թեման վեպի մեջ ծավալված է շատ ազդու և բոցավառ եղանակով:

Ինչպես Բաֆֆու ժամանակ, այնպես էլ նը-

րանից հետո, համարյա մինչև 1905 թ., հայրենասիրության թեմատիկան կարող էր իր արտահայտությունը գտնել մեր գրականության մեջ շատ մեծ սահմանափակումներով: Յարական գրաքննությունն ստիպում էր կիրառել եզոպոսյան լեզու: Այդ աչքի է ընկնում մանավանդ 80-ական թվականներից սկսած, երբ քաղաքական ուսուցիչական ավելի ճնշող միջոցների անցավ: Հայ հայրենիքը որպես ինքնուրույնություն չըկար, իսկ ցարական պետությունը ժողովուրդներին բանտ էր: Հայրենիքի պաշտպանության դադարի ավելի հնչում է որպես հայրենիքն ազատելու մոտիվ: Այդպիսի իմաստով է երգում պոետ Հ. Հովհաննիսյանը.

«Եվ թող ես գրկած կուրծքը մայրենի,
Քո ազատ կուրծքը, սիրուն հայրենիք,
Քրնանամ, մինչև ականջիս հասնի
Քո ազատության անուշ ավետիք.
Ես այն ժամանակ կհընեմ և պայծառ
Արևըդ տեսած՝ իմ բախտը կօրհնեմ,
Որ, իմ հայրենիք, միայն քեզ համար,
Քեզ համար միայն կյանքըս զոհեմ
եմ...»

Զինվորը մեռնում է հայրենիքի համար: Նա համոզված է, որ իր մահն ապարդյուն չի լինի: Սակայն այդ պարզ դադարի ամբողջ բանաստեղծության մեջ քողարկված է և որոշ չափով

արարական բնութիւնը: Այլեւի բացարձակ է նույն գաղափարի արտահայտութիւնը «Վարդանանց օրը» բանաստեղծութեան մեջ:

«Դյուցազանց ոգին մոռցված դամբանից
Հարութիւն առած մեզ շունչ է տվել,
Եվ նոր Ալարայր մեր խորունկ քնից
Զարթած դիմում ենք կովել ու
մեռնել...»

Դարձյալ Ալարայրի հերոսները ոգևորում են դրողին ու արթնացնում են կովելու հայրենիքի համար: Շատ բնորոշ է այս փաստը, որովհետև դարձյալ կապված է նույն ժողովրդական տրամադրութիւնների հետ: Պոետը հիշեցնում է Ալարայրի հերոսներին՝ կանչելով «կովել մեռնել» հայրենիքի համար:

Հայրենասիրութեան և հայրենիքի պաշտպանութեան գաղափարի դեմոկրատիկ բնութիւնը շարունակութիւնը գտավ XIX դարի վերջի և XX դարի հայ գրականութեան մեջ մինչև Հոկտեմբերյան մեծ ուղեւորի, երբ այդ գաղափարների բովանդակութիւնը որակապես մեծ փոփոխութեան ենթարկվեց: Շատ բնորոշ է, որ XX դարի մեր գրականութեան մեջ այդ գաղափարները ժողովրդասիրական ոգով և անգամ ձեռով իրենց շարունակութիւնը գտան Հովհ. Թումանյանի և Ալ. Իսահակյանի ստեղծագործութիւնների մեջ: Հայրենիքի պաշտպանութեան

դադափարը փայլուն կերպով արտահայտվեց
 Հովհ. Թումանյանի «Սասունցի Դավիթ» պոեմի
 մեջ: Սխալ կլիներ ընդունել այդ երկը միայն
 որպես ժողովրդական էպոսի, այսպես ասած,
 գրական արտացոլում: Այն բանաստեղծները, ո-
 րոնք ժողովրդի հետ կապված են հողով և մարմ-
 նով, իրենց ստեղծագործութան մեջ ամեն
 կողմից մոնոլիտորեն ձուլված են և ժողովրդա-
 կան բանահյուսութան հետ: «Սասունցի Դա-
 վիթ» էպոսի պարունակած հայրենիքի պաշտպա-
 նության դադափարը, որի արմատները կապված
 են հնագույն Հայաստանի հայրենասիրական դա-
 դափարախոսութան հետ, Հովհ. Թումանյանի
 հիշյալ պոեմում պատկերված է դաքմանարի
 նուրբ և իմաստալից կերպով: Անհուն և ջերմ է
 Դավիթի սերը դեպի իր հայրենիքը: Նա մեծ և-
 ունդով կռվում է հայրենիքի թշնամիներին դեմ:
 Հաղթելով նրանց՝ նա արտահայտում է իր հե-
 բոսական վեհանձնությունը: Պարտված թշնամի-
 ներին նա դիմում է հետևյալ խոսքերով.

«Դարձեք եկած ճանապարհով
 Ձեր հայրենի հողը Մըսրա,
 Բայց թե մին էլ զեք ու զոտով
 Վեր եք կացել դուք մեզ վրա,
 Հորում լինեն քառսուն դազ խոր,
 Թե ջաղացի քարի տակին,—

Կեննն ձեր դեմ, ինչպես էսօր,
Սասմա Դավիթ, Թուր—Կեծակին»:

Դավիթը ժողովրդական հայրենասիրութեան մարմնացումն է, նա հայրենիքի պաշտպանութեան գաղափարի փայլուն իրականացնողը: Ժողովրդական էպոսի գաղափարները Թումանյանը վարժանալի վարպետութեամբ, ժողովրդին հարազատ ձևերով արտահայտեց գրական ոճով. սուինքն նա արեց այն, ինչ որ հայ ժողովրդի սրբտին մոտ գաղափարների վերաբերմամբ արել է, Երինակ՝ Փավստոս Բյուզանդացին:

Ցարական ժամանակի հայ գրողն ստիպված էր միավորել հայրենիքի պաշտպանութեան գաղափարը հայ ժողովրդի ազատադրման գաղափարի հետ: Հայ ժողովուրդը պիտի ազատեր երկիրը ցարիզմի և սուլթանիզմի ճնշող իշխանություններից: Ուրեմն հարկավոր էր կռվել ճնշված հայրենիքի համար, պաշտպանել հայ ժողովրդի կյանքը և նրա կուլտուրան: Մեր համարյա բոլոր պոետները և վիպասաններն այդ թեման արտահայտեցին իրենց երկերում: Հիշենք այդ առթիվ Ավ. Իսահակյանի «Երազ» բանաստեղծությունը: Միտ և մտածմունքների բանաստեղծը գրում էր.

1 «Եվ հանկարծ մի օր լսեցի հեռվից
Մարտահրավերը փեհ ազատութեան,
Ըմբոստ ամբոխի ձայնը մըրկալից,

Երգեր մարտական, շնորհ ուղմական,
 վառ դըրուշակի խըրոխտ ծածանում,
 Զենքի շառաչյուն, ձիան տրոփյուն,
 Քայլեր առնական,
 Հողիս մոտեցան,
 Եվ դողոց ահա,
 Եվ թեթևացավ
 Հողը իմ վերա՝
 Եվ սիրաբա լըցվեց այրվող արյունով,
 Ռզեցա ելնել, նժույզն ամեհի
 Խըթանել, թոնել, շառաչել զենքով,
 Կըռվել ու մեռնել դաշտերում
 ուղմի...» :

Այս տողերի մեջ կարծես թե տրված է «Սա-
 սունցի Դավիթ» էպոսի հերոսների տրամադրու-
 թյան ամենատեղմ պատկերը. սա մի տեսակ
 բանաստեղծական կոնսպեկտ է հայ ժողովրդի
 մեծ էպոսի մեջ արտահայտված հայրենիքի
 սրաշատսանության դաղափարի, սակայն միավոր-
 ված և ունուլուցիայի գաղափարի հետ :

Փետրվարյան հեղաշրջումը Ռուսաստանում
 հայ ժողովրդի համար ինքնուրույն քաղաքական
 կյանք ստեղծելու նախադրյալներ առաջացրեց :
 Հոկտեմբերյան Մեծ ունուլուցիան հնարավորու-
 թյուն տվեց իրոք հիմնել պետականություն
 Հայաստանում : Հայաստանի սովետացումից ա-
 ուղ համոզված լինելով, որ մոտ է հայ ժողո-

վըրդի խկական աղատագրման ժամկետը, մեր
պայծառ բանաստեղծ վահան Տերյանը, որպես
սովետական հայրենիքի կառուցողներից մեկը,
քաղաքացիական պատերազմի և ինտերվենցիայի
ժամանակ գրում էր իր ոգեչունչ տողերը.

Վեր թշնամին բերում է «տանկեր»
Բերում է ցեղեր սևամորթ,
Կեռ դաշտուններով գալիս են,
Մռայլ գնդերով գալիս են
Թող դա՛ն...

Մեր կրակի դեմ անդոր են,
Մեր դրոշի դեմ՝ կըխորտակվեն.
Մենք մուխ աշխարհում ջահ ենք,
Մենք տանջված երկրին՝ դրոշ.
Թող դան,
Թող դա՛ն,
Թող դա՛ն...»:

Բուլչևիկ պոետը տողորված էր սովետական
հայրենասիրության զգացմունքներով: «Թող
դա՛ն» հնչում էին պոետի բառերը՝ ճայնակցե-
լով Կարմիր Բանակի հրետանու համազարկե-
րին... Տերյանի հայրենասիրությունն արդեն
նոր որակ, նոր բնույթ ուներ: Դա ինտերնացիո-
նալիստական հայրենասիրություն էր: Հայ ժո-
ղովուրդը նրա համար մի միայնոր էր, որ նախ-
կին ցարական Ռուսաստանի բոլոր ժողովուրդնե-
րի հետ կասյված էր եղբայրական կասպերով:

Այդպիսի ինտերնացիոնալիստական հայրենասիրութեամբ լի է հայ դրականութիւնը մեր սովետական հայրենիքում: Դժուար է սովետական հայ դրողների հայրենասիրութիւնը բնութագրել ըստ զգացմունքների թափի: Կարելի է ասել, որ սովետական հայ արդի դրականութիւնը միահամուռ և բոցավառ հայրենասիրութեամբ տոգորված դրողներից է բաղկացած: Յուրաքանչյուր դրողի այս կամ այն տողերը պարունակում են սովետական հայրենասիրութեան և հայրենիքի պաշտպանութեան դաշտանների ջերմ արտահայտութիւններ:

Հայրենական մեծ պատերազմը, լիրբ և քարբարոս թշնամու ներխուժումն այս տասամայլա ընթացքում նոր բովանդակութիւն տվին մանավանդ հայ բանաստեղծութեանը: Եթե նախորնթաց տարիներում հայ դրողներն արտահայտում էին իրենց հայրենասիրութիւնը սոցիալիստական շինարարութիւնը պատկերելիս, ապա այժմ լցված ջերմ սիրով դեպի իրենց հսկա հայրենիքը՝ ՍՍՌՄ և անծայր դայրույթով՝ դեպի Փաշլուքն ու թշնամիները, նրանք միաձայն կանչում են՝ կռվել հանուն սովետական հայրենիքի փրկութեան, կռվել քաջութեամբ և հարկ նդած դեպքում՝ կյանքը գոհելով: Սակայն սովետական շրջանի հայ դրականութեան մեջ հայրենասիրութեան և հայրենիքի պաշտպանութեան

գաղափարներն սկզբունքորեն շատ են տարբեր-
 վում նախընթաց ժամանակների ամբողջ հայ
 գրականության մեջ ստեղծված նույն գաղափար-
 ներից: Հայրենասիրության գաղափարն այժմս
 սերտորեն կապված է ՍՍՌՄ ժողովուրդների
 եղբայրության գաղափարի հետ: Այժմ հայ ժո-
 ղովրդի հայրենիքը ոչ միայն Հայաստանն է,
 այլ և մեր հսկա Սովետական Միությունը: Այ-
 լապես ասելով՝ հայրենիքի և նրա պաշտպանու-
 թյան գաղափարն այժմ նոր բովանդակություն,
 նոր որակ է ստացել: Այդ խմաստով է գրում
 Դ. Դեմիրճյանը իր «Հայրենիքի հետ» բանաս-
 ստեղծության մեջ:

«Դե վե՛ր, դե վե՛ր, էլ չմնաց այլ ոչինչ
 րան ասլրելու,
 Քան միմիայն մի խնդություն՝ մի
 հայրենիք սուրբ ու վեհ,
 վեր կաց, սիրտ իմ, որ դու ես վառես՝
 նրան ճոնելու
 Սիրո հզոր մի հրդեհ»:

Հայրենական մեծ պատերազմը մեր բանաս-
 ստեղծների ուշքն ու միտքը դարձնում է դեպի
 Սովետական երկրի հերոսական կարմիր Բանա-
 կը: Հայ բանաստեղծը՝ որպես ժողովրդի խակա-
 կան զավակ՝ չի կարող չկասել կարմիր Բանակի
 հերոսներին իր երկրի անցյալի հերոսներին հետ:

Ջերմ սերը դեպի Կարմիր Բանակն արտահայտվում է այդ ձևով Գ. Սարյանի «Գովք ուս ժողովրդին» բանաստեղծության մեջ.

«Դալիս են նրանք՝ Դավթի ցեղը քաջ,
Եվ Տարիելի սերունդներն արի,
Եվ կալմիկներին Ջանդարն է դալի,
Մանասն է դալիս տափաստաններից,
Եվ բուրբ-բուրբ ցեղերն են դալի,
Որ Մուրոմեցուց թափ առնեն նորից,
Ջարդեն թշնամու ոհմակը դալի»:

Եղբայրակից ժողովուրդներին սովետական Հայրենիքի պաշտպանության մասին է երգում այդ կերպ պոետը:

Կարծես դարձյալ Սասունցի Դավթի կոչն է լավում, բայց նոր բովանդակություն ստացած կույել սովետական Սասնա՝ ՍՍՌՄ-ի Համար:

Գ. Բորյանն այդ կոչն անում է իր «Ստալինի կոչը» բանաստեղծության մեջ.

«Մոդար է մարտը մեր քաջ զնդերի,
Մերն է արևը մեծ ճշմարտության,
Առա՛ջ, ընկերներ՛ր, Հանո՛ւն Ստալինի,
Հանո՛ւն մեր հողի և երջանկության»:

Սովետական երկրի ժողովուրդներին մեծ առաջնորդ, Կարմիր Բանակի գերագույն հրամանատար Ստալինի կոչը բոցավառ Հայրենասիրա-

Այն զգացմունքներ է առաջացնում: Հրաշունչ
տողեր է գրում Ն. Զարյանը.

Ընկնում են մահվան հորդաներն ինչպես
մորեխի ամպեր,
Կարմիր Բանակի հուժկու կործանիչ
հարվածների տակ»:

Պոետի սիրտը դարձել է հրաբուխ. նրա
խոսքերը ժայթքող հրաբուխի լավայի գետեր
են: Ն. Զարյանը հուզված է Փաշխատների բար-
քարոսությունների մասին իմանալով.

Օ՛, ինչպես կուզենայի գոռալ աշխարհով
մեկ
Երկու միլիարդ ֆուդասային ումբի
գլորդոցով,
Ազատ ժողովուրդներ, այս դևերին
մոխրացրեք
Ձեր սուրբ ցասման կայծակների վրեժխնդիր
րոցով»:

Ահա սովետական բանաստեղծի վերաբեր-
մունքը դեպի հայրենիքի պաշտպանության գա-
ղափարը: Ոչնչացնել Սովետական երկրի թշնա-
մուն, ոչնչացնել Փաշխատներին անխնա և ան-
վերջ, — սրանք են մեր սովետական պաշտպա-
նության գաղափարի նշանաբանները: Այդպես է
մտածում և պոետ Հ. Շիրազը:

«Այս բոլորի տեղ՝ մահ կտանք նրան,
Բայց թե մահն է քեզ,
Իբրև դերեզման՝ մի բուռ հող կտանք
Մեր հայրենիքից»:

Սովետական հայ դրականության մեջ հայրենիքի պաշտպանության դադարաբեր շատ պարզ է դարձել և ստացել է նոր, ավելի բարձր որակ: Հայ դրողն այժմ կոչ է անում պաշտպանել ոչ միայն հայ ժողովրդի պատմական օջախ Հայաստանը, այլ և միաժամանակ ամբողջ Սովետական Միությունը, որի հիմնական օղակներից մեկն է Հայաստանը: Կռվել հանուն սովետական հայրենիքի, եղբայրակից ժողովուրդներին պաշտպանության, աշխատավորության հետ մարդկությունը դեպի լուսավոր ասպարան տանելու համար, կռվել մեծ առաջնորդ Ստալինի գեկարվարությամբ և սովետական վառավոր դրոշի տակ— ահա՛ ինչի մասին են գրում մեր գեղարվեստական դրականության շինարարները:

Հայրենիքի պաշտպանության դադարաբեր ամենից առաջ ձևակերպվել է հայ ժողովրդի բանավոր ստեղծագործության մեջ և ապա անցել է ու խոր արձատներ թողել հայոց դրականության մեջ ամենահնազույն ժայռնակներից: Այդ դադարաբեր կենսունակությունը միշտ կապված է եղել հայ ժողովրդի պատմական ուղիներ:

րի հանդամանքների հետ: Հայ ժողովուրդը միշտ ստիպւած է եղել մի ձեռքում պահել նյութական արտադրութեան դործիքները, իսկ մյուսի մեջ՝ սուրբ: Աշխատանք և կռիւլ թշնամու դեմ— ահա հայ ժողովրդի դարավոր պատմութեան գլխավոր ուղին: Բայց այդ հանդամանքը բարդանում էր շնորհիւ մի այլ հանդամանքի, այն է, որ Հայաստանը շատ և շատ անգամ վորցնում էր իր անկախությունը և թշնամիներէ ձեռքերում պատառ-պատառ էր լինում: Հայրենիքի պաշտպանութեան խնդիրը հայ ժողովրդի համար դառնում էր միաժամանակ հայրենիքի պատահրման հարց: Դասակարգային պայքարի պայմաններում այդ խնդիրները բարդ կերպարանք էին ստանում: Այդ էր պատճառը, որ օրինակ, հայոց նոր դրականութեան մեջ (XIX դ.) հայ գրողը երբեմն չէր կարողանում պարզօրեն որոշել, թե ո՛ր հայրենիքն է նա կոչ անում պաշտպանել և ո՛ւմ դեմ: Կամ ավելի ճիշտն ասած՝ նա ստիպւած էր քողարկել իր մտքերը և՛ հայրենիքի անկախութեան, և՛ պաշտպանութեան վերաբերյալ: Նա ստիպւած էր դիմել հեռավոր անցյալին՝ իր ներկայի մասին խոսելու նպատակով:

Բոլորովին այլ են սովետական շրջանի հայ գրողի ստեղծագործական հնարավորությունները: Սովետական հայ դրականութեան մեջ ար-

տահայտվեցին Հայրենասիրութեան և Հայրենի-
քի պաշտպանութեան նոր բնութի դադափարներ :
Չկտրվելով անցյալից, այսինքն միշտ հիշե-
լով, որ Հայ ժողովրդի հնագույն Հայրենիքն է
Հայաստանը՝ սովետական Հայ գրողը դիտում է
այդ Հայրենիքը որպես նոր, հակա Հայրենիքի
մի մասը, որպես ազատ ժողովուրդների միու-
թեան տերիտորիաներից մեկը : Պաշտպանելով
ՍՍՌՄ-ը՝ Հայ ժողովուրդը դբանով պաշտպա-
նում է և Հայաստանը, ինչպես և պաշտպանե-
լով Հայաստանը՝ նա պաշտպանում է ամբողջ
Սովետական Միութեանը : Ահա այդ բարձր ին-
տերնացիոնալիստական դադափարով են տողոր-
ված Հայ նորագույն գրականութեան երկերը :
Այդ վսեմ տրամադրութեամբ են համակված մեր
սովետական պոետները և առհասարակ բոլոր
գրողները : Այդ է պատճառը, որ Հայ բանա-
ստեղծը հուզված է լեհ մեծ պոետ Միգկևիչի
արձանը Փաշիստների կողմից ջարդվելու առ-
թիվ : այդ է պատճառը, որ Հայ պոետը դիմում
է բոլոր ժողովուրդներին հերոսներին՝ Տարիելին,
Ջանգարին, Իլիա Մուրոմեցին և ուրիշներին :
Եղբայրութեան կարմիր դրոշմ ծածանվում է
արևի շողերի տակ ամբողջ մեր երկրում և ողե-
վորում է Հայ գրողներին : Հայրենիքի պաշտ-
պանութեան դադափարն այժմ Հայ գրականու-
թեան մեջ, ինչպես և մեր եղբայրակից ժողո-

վուրդների դրականությունների մեջ, ստացա՞յ
իր ամենաբարձր, ամենախորիմաստ և ամենա-
ազնիվ բովանդակությունը: Եվ այսօր, երբ
կարմիր Բանակը մի շարք փառապանծ հաղթու-
թյուններ տանելով, ջարդելով հեռ է քշում
վայրադ, զզվելի Փաշխտ-թշնամուն՝ հայրենիքի
պաշտպանության դադափարն ավելի ու ավելի է
խորանում հայ դրականության մեջ:

Մոսկվա, 1941, դեկտեմբեր 12



Պատ. խմբագիր՝
ՀՐ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՎՅ 3999. Պատվեր 528. Տիրաժ 3000.
Տպագրական 1,5 մամ. Հեղինակային
1,4 մամ. Մեկ մամուլում 33120 նշան.
Ստորագրված է տպագրության 10/VIII-42 թ.

Հայպետհրատի տպարան, Երևան, Լենինի 65

Проф. И. КУСИКЯН

**Идея защиты родины
в армянской литературе**

(На армянском языке)

Аргиз, Ереван, 1942

ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0629397

(294)

1861 n. 50 4.

4m4
1321